



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԻՑ

ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՁԵՐ ԲԻՋՆԵՍԸ

ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ
ԿԶԱՐՈՎ
ՀԱՐԿՄԱՆ
ՌԵԺԻՄ

ՀԱՐԿԵՐԸ
ԵՎ
ՁԵՐ ԲԻՋՆԵՍԸ

ՀԱՍՏԱՏԱԳՐԿԱԾ
ԿՃԱՐՈՎ
ՀԱՐԿՄԱՆ
ՌԵԺԻՄ

Հաստատագրված վճարով հարկման ռեժիմ: — Եր., Գ-ար, 2007, 36 էջ:

Գրքույկը նախատեսված է փոքր և միջին բիզնեսով զբաղվողների համար: Այն օգտակար և կարևոր տեղեկություններ է պարունակում հաստատագրված հարկով հարկման ռեժիմի վերաբերյալ:

Սույն գրքույկի ցանկացած մաս չի բույլատրվում որևէ կերպ փոխանցել կամ արտատպել առանց ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գրավոր թույլտվության:

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
2. ԻՆՉ Է ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԸ	5
3. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՈՎ ՀԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ	6
4. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՈՎ ՀԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	7
4.1. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆ ՈՒ ՎՃԱՐՈՒՄԸ	7
4.2. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ	8
4.3. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՈՎ ՀԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՅՈՒՄԸ.....	10
4.4. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՍՄԱՆ ՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ	12
4.5. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ.....	13
4.6. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒՂԴԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ	13
4.7. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ԻՆԴԵՔՍԱՎՈՐՈՒՄԸ.....	14
5. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԸ.....	14
5.1. 30 ԺԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՄԻՑ ՈՉ ԱՎԵԼԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՄԱԿԵՐԵՍ ՈՒՆԵՅՈՂ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ (ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ) ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	14
5.2. ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՎԱՅՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....	20
5.3. ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆԵԴԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....	21
5.4. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	23
5.5. ՎԱՐՄԱՎԻՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	24
5.6. ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱԼՆԵՐԻ (ԿԵՏԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....	24
5.7. ԲԵՆՁԻՆԻ ԵՎ ԴԻՁԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	25

5.8. ԱՎՏՈԿԱՆԳԱՌՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	26
5.9. ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԶԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	27
5.10. ԽԱՂԱՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	27
5.11. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱԶԱԼՑՄԱՆ (ԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	28
5.12. ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԱՅԻՆ ԱՎՏՈՄԱՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ	29
5.13. ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	29
5.14. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	31
5.15. ՏԵՄԱՄԱԳՆԻՏՈՖՈՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՄԱԺԱՊԱՎԵՆՆԵՐԻ ՎԱՐՁՈՒՅԹ	31
5.16. ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	32
5.17. ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՑՆՅՈՒՂԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	33
5.18. ԲԻԼԻԱՐԳ ԽԱՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	34

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն գրքույկը նախատեսված է փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների համար: Այն օգտակար և կարևոր տեղեկություններ է պարունակում հաստատագրված հարկով հարկման ռեժիմի վերաբերյալ:

2. ԻՆՉ Է ՎԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԸ

Հաստատագրված վճարն օրենքով սահմանված պարտադիր վճար է, որը վճարվում է գործունեության որոշակի տեսակների դեպքում (տե՛ս Բաժին 3): Ընդ որում, հաստատագրված վճարի մեծությունը կախված չէ գործունեության արդյունքներից, այսինքն՝ գործունեությունից ստացված հասույթից կամ զուտ եկամտից:

Անհատ ձեռնարկատերերի համար հաստատագրված վճարը փոխարինում է եկամտահարկին և (կամ) ավելացված արժեքի հարկին (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ իրավաբանական անձանց համար՝ շահութահարկին և (կամ) ԱԱՀ-ին:

Հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների մասով վճարվում է **միայն հաստատագրված վճար**, ինչը նշանակում է, որ այդ դեպքում շահութահարկ (եկամտահարկ), ԱԱՀ (բացառությամբ ներմուծվող ապրանքների համար մաքսային սահմանին վճարվող ԱԱՀ-ի) կամ պարզեցված հարկ վճարվել չի կարող:

Հաստատագրված վճար վճարողներն այլ հարկատեսակները¹ և ներմուծված ապրանքների համար գանձման ենթակա ԱԱՀ-ն վճարում են ընդհանուր սահմանված կարգով:

Հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով վճարողների համար կատարվում են «Ավելացված արժեքի հարկի մասին», «Շահութահարկի մասին» և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված արտոնություններն ու նվազեցումները:

¹ Բացառությամբ շահութահարկից (եկամտահարկից), ՀՀ տարածքում իրականացված գործարքների մասով՝ ավելացված արժեքի հարկից:

3.

ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՈՎ ԸՆԴՀԱՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակները սահմանված են «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով. այլ օրենքներով հաստատագրված վճարներ են սահմանվել ծխախոտի արտադրանքի, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող բենզինի և դիզելային վառելիքի համար: «Հաստատագրված վճարների մասին» օրենքով հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակներ են համարվում.

- 30 քառակուսի մետր մակերեսից ոչ ավելի առևտրական մակերես ունեցող խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով իրականացվող առևտրական գործունեությունը.
- առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեությունը.
- հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը.
- ավտոտրանսպորտային գործունեությունը.
- վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությունը.
- լուսանկարչական լաբորատորիաների գործունեությունը.
- ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեությունը.
- բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի գործունեությունը.
- ավտոկանգառների գործունեությունը.
- արդյունագործական ձկնորսության գործունեությունը.
- խաղատների գործունեության կազմակերպումը.
- շահումով խաղային ավտոմատների շահագործումը.
- ինտերնետ շահումով խաղերի կազմակերպումը.
- համակարգչային խաղերի կազմակերպումը.
- տեսամագնիտոֆոնների և տեսաժապավենների վարձույթը.
- վիճակախաղերի կազմակերպումը.

- բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպումը.
- ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեությունը.
- բիլիարդ խաղի կազմակերպումը:

Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու պատճառով լուսանկարչական լաբորատորիաների գործունեությունը, խանութների միջոցով իրականացվող առևտրական գործունեությունը դադարել են համարվել հաստատագրված վճարով հարկվող գործունեություն, իսկ կրպակների (տաղավարների) միջոցով իրականացվող առևտրական գործունեությունը համարվում է հաստատագրված վճարով հարկվող միայն կրպակի (տաղավարի) մակերեսը որոշակի չափը չգերազանցելու դեպքում (տե՛ս 5.1 կետը) :

Եթե ֆիզիկական անձն իրականացնում է հաստատագրված վճարով հարկվող գործունեություն՝ չհանդիսանալով անհատ ձեռնարկատեր, ինչը նշանակում է, որ նա ապօրինի գործունեություն է իրականացնում, ապա հաստատագրված վճարի հաշվարկ չի կատարվում, և նրա հարկային պարտավորությունները հաշվարկվում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածին համապատասխան:

4. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՈՎ ՀԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՎԱՐԿՈՒՄՆ ՈՒ ՎՃԱՐՈՒՄԸ

4.1.1. Հաստատագրված վճարը գերազանցապես հաշվարկվում է որպես օրենքով սահմանվող **բազմապատիկ մեծության, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների արտադրյալ**՝ դրամական արտահայտությամբ: Նշված կանոնից տարբերվող կերպով է հաշվարկվում միայն վիճակախաղերի կազմակերպման գործունեության համար հաստատագրված վճարը: Բացի այդ՝ ուղղիչ գործակիցներ չեն սահմանված խաղատների գործունեության, շահումով խաղային ավտոմատների շահագործման, ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման գործունեության տեսակների համար:

Գործունեության յուրաքանչյուր տեսակի համար օրենքով սահմանվել են յուրահատուկ (տարբեր) ելակետային տվյալներ, բազմապատիկ մեծություն և ուղղիչ գործակիցներ:

4.1.2. Հաստատագրված վճարի գումարի մեջ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60 տոկոսի չափով՝ բացառությամբ վիճակախաղերի կազմակերպման գործունեության տեսակի, որի համար ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունն ընդունվում է 0 տոկոս:

4.1.3. Հաստատագրված վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա համար: Հաստատագրված վճար վճարողն ինքն է հաշվարկում հաստատագրված վճարի չափը: Հաստատագրված վճարի չափը որոշում է հարկային մարմինը, եթե հաստատագրված վճար վճարողը չի ներկայացրել ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ նոր հայտարարություն, կամ եթե հաստատագրված վճարի մեծությունը հիմնավորված չէ:

4.1.4. Գործունեության բոլոր տեսակների գծով հաստատագրված վճարը վճարվում է մինչև տվյալ ամսվան **հաջորդող ամսվա 15-ը ներառյալ**:

4.2. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

4.2.1. Հաստատագրված վճար վճարողն առաջիկայում գործունեություն իրականացնելու իր նպատակի մասին հարկային մարմնին տեղեկացնելու², ինչպես նաև հաստատագրված վճարի ելակետային տվյալները և ուղղիչ գործակիցները հայտարարագրելու նպատակով՝ հարկային մարմնին է ներկայացնում **հայտարարություն**:

Հայտարարության ներկայացման մասին տեղեկությունները ներկայացված են հետևյալ աղյուսակում.

2 Տեղեկությունները ներկայացվում են նաև օրենքով սահմանված խաղարկությունով և ոչ խաղարկությունով, ինչպես նաև համակցված վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ նախորդ ամսում նման գործունեություն իրականացրած լինելու մասին:

Գործունեության տեսակ	Ինչ ժամանակաշրջանի համար է ներկայացվում Հայտարարությունը	Երբ է պետք ներկայացնել Հայտարարությունը	Կարևոր առաճճնահատկություններ
Առևտրի իրականացման վայրի կազմակերպում	յուրաքանչյուր ամսվա	մինչև փվյալ ժամանակաշրջանի սկիզբը	
Ավտոբորանսպորտային գործունեություն	յուրաքանչյուր եռամսյակի	մինչև փվյալ ժամանակաշրջանի սկիզբը	
Խաղարկությունով և ոչ խաղարկությունով, ինչպես նաև համակցված վիճակախաղերի կազմակերպում	յուրաքանչյուր ամսվա	յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո՝ մինչև փվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ	
Տոբալիզատորի, ինտերնետ տոբալիզատորի և ինտերնետ շահումով խաղերի կազմակերպում	յուրաքանչյուր ամսվա	գործունեություն սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ: Գործունեության իրականացման ընթացքում յուրաքանչյուր ամսվա համար մինչև փվյալ ամսվան նախորդող վերջին աշխատանքային օրը:	Ելակետային փվյալների մասին հայտարարությունը անհրաժեշտ է ներկայացնել գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) մասով ՝ իրենց հաշվառող հարկային մարմին: Գործունեության իրականացման ամսվա ընթացքում կազմակերպիչները, ելակետային փվյալների ավելացման դեպքում, պարտավոր են ավելացման օրվան նախորդող առնվազն հինգ աշխատանքային օր առաջ իրենց հաշվառման հարկային մարմին ներկայացնել փվյալ ամսվա ելակետային փվյալների մասին նոր հայտարարություն :
Գործունեության մյուս տեսակներ	յուրաքանչյուր կիսամյակի	յուրաքանչյուր փարվա հունիս և դեկտեմբեր ամիսների ընթացքում	

Գործունեության իրականացման յուրաքանչյուր ամսվա համար ներկայացված ելակետային տվյալները **նվազեցման ենթակա չեն**:

Ավտոտրանսպորտային միջոցների գազալիչքավորման գործունեություն իրականացնողները յուրաքանչյուր ամիս ներկայացնում են նաև նախորդ ամսվա ընթացքում իրացված գազի ծավալների վերաբերյալ **տեղեկություն**:

4.2.2. Կրպակների միջոցով առևտրական գործունեության, հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության և ավտոտեխսպասարկման գործունեության համար սահմանված են սահմանային չափեր:

Սահմանային չափերի գերազանցման դեպքում հաստատագրված վճար վճարողը, սահմանային չափը գերազանցելու ժամանակաշրջանի (եռամսյակի կամ ամսվա) համար, հաշվարկում և վճարում է շահութահարկ (եկամտահարկ) ու ավելացված արժեքի հարկ: Ընդ որում, դրանցից պակասեցնում է տվյալ ժամանակաշրջանի համար վճարված հաստատագրված վճարի մեջ ներառվող շահութահարկը (եկամտահարկը) և ավելացված արժեքի հարկը, որը որոշվում է հաշվարկային դրույքաչափին համապատասխան: Սահմանային չափը գերազանցելու դեպքում հարկ վճարողները տվյալ եռամսյակում (ամսում) և դրան հաջորդող ժամանակաշրջաններում ևս համարվում են հաստատագրված վճար վճարողներ:

Սահմանային չափ է նախատեսվում նաև առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության մասով: Գործունեության այս տեսակի մասով սահմանային չափը գերազանցելու դեպքում հաստատագրված վճարի մեծությունը կրկնապատկվում է (տե՛ս 5.2 կետը):

Գործունեության այն տեսակների համար, որոնց համար նախատեսված են սահմանային չափեր, հարկ վճարողները հարկային մարմին են ներկայացնում հայտարարություն, որում նշվում են սահմանային չափերի գերազանցման (կամ չգերազանցման) հանգամանքն արտացոլող տեղեկություններ:

4.3. ՀԱՏՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՈՎ ՀԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՂԱՂԱՐԵՑՈՒՄԸ

4.3.1. Եթե հաստատագրված հարկ վճարողը որոշում է դադարեցնել հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը, ապա նա պարտավոր է նախապես այդ մասին հայտնել հարկային տեսչությանը՝ ներկայացնելով գործունեության դադարեցման մասին **դիմում-**

հայտարարություն: Գլխում-հայտարարության ձև, ըստ էության, սահմանված չէ. այն կարելի է ներկայացնել ազատ ոճով: Հայտարարության ձև սահմանված է միայն այն գործունեության տեսակների համար, որոնց հաստատագրված վճարի հաշվարկման համար գործունեության իրականացման օրերի թիվը ելակետային տվյալ է՝ այն էլ միայն գործունեության ժամանակավոր դադարեցման դեպքի համար: (տես՝ ստորև բերված ձևը):

.....
 _____ տարածքային հարկային
 տեսչության պետ՝ _____

**ԳԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
 ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
 ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Վճարողի լրիվ անվանումը _____
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)

--	--	--	--	--	--	--	--	--	--
3. Գործունեության տեսակը _____
4. Գործունեության իրականացման հասցեն _____
5. Գործունեության դադարեցման սկիզբը³ “ _____ “ _____ 200__ թ.
 ավարտը⁴ “ _____ “ _____ 200__ թ.
6. Ընդամենը _____ օր

(նշումը կատարվում է թվով և տառերով)

Վճարողի _____ գրանցված է _____ տիտ կողմից
 (պաշտոնատար անձի) թիվ _____ “ _____ ” 200__ թ.
 ստորագրությունը

Կ. Տ. _____ Կ. Տ.
 _____ ” _____ ” 200__ թ.

.....

3 Միայն սկիզբը նշելու դեպքում վճարողը պարտավոր է վերսկսելիս գրավոր դիմումի միջոցով նախապես տեղեկացնել հարկային տեսչության մարմնին՝ ներկայացնելով ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ նոր հայտարարություն:

4 Նշվում է գործունեություն չիրականացնելու վերջին օրը:

4.3.2. Գործունեության դադարեցման մասին գրավոր չհայտնելու դեպքում հաստատագրված վճար հաշվարկվում է հարկային տեսչության կողմից՝ կիրառելով նախորդ ամսվա (ժամանակաշրջանի) համար ներկայացված ելակետային տվյալները և ուղղիչ գործակիցները:

4.4. ՆԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԶՎԱՊԱՆԱԿԱՆ ՆԱԶՎԱՌՄԱՆ ՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՆԱԶՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ

4.4.1. Հաստատագրված վճար վճարողները պետք է վարեն հաշվապահական հաշվառում՝ այդ ոլորտը կարգավորող օրենքով սահմանված կարգով: Հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում հաստատագրված վճար վճարողները պարտավոր են վարել նաև այլ հաշվառում և (կամ) գրանցումներ: Մասնավորապես, հաստատագրված վճար վճարողները համապատասխան դեպքերում ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով պետք է վարեն հասույթների գրանցման, առաքումների գրանցման և դրամարկղային գրքեր:

Հաստատագրված վճար վճարողներն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմին ներկայացնում են հաշվապահական հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, հարկային հաշվարկներ, հայտարարագրեր և հարկային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթեր և տեղեկություններ: Եթե իրականացվում է միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեություն, ապա ԱԱՀ-ի և շահութահարկի հաշվարկներ չեն ներկայացվում:

4.4.2. Հաստատագրված վճար վճարողները, հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով, հարկային հաշիվ դուրս չեն գրում: Հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում վճարողները պարտավոր են պետական բյուջե վճարել նաև ավելացված արժեքի հարկ՝ միաժամանակ վճարելով տվյալ ժամանակաշրջանի համար վճարման ենթակա հաստատագրված վճարն ամբողջությամբ: Հաստատագրված վճար վճարողները հարկային հաշվի փոխարեն կարող են դուրս գրել ցանկացած այլ տեսակի հաշվարկային փաստաթղթեր:

4.5. ՄԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ԵՒՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հաստատագրված վճարի չափը համարվում է **չհիմնավորված**, եթե հաստատագրված վճար վճարողի կողմից ներկայացված ելակետային տվյալը կամ ուղղիչ գործակիցը **ցածր է** հարկային մարմնի կողմից փաստացի արձանագրված ելակետային տվյալից **կամ** ուղղիչ գործակիցից, կամ եթե մինչև գործունեությունը սկսելը կամ վերսկսելը վճարողը **չի ներկայացրել** ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ **հայտարարություն**:

Հաստատագրված վճարի չափը չհիմնավորված լինելու կամ օրենքով սահմանված տեղեկությունները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքերում հաստատագրված վճար վճարողը ենթարկվում է օրենքով սահմանված պատասխանատվության: Մասնավորապես, վճարողից գանձվում է տուգանք՝ պակաս հաշվարկված կամ չհաշվարկված հաստատագրված վճարի 50 տոկոսի չափով: Այն դեպքում, երբ հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, նույն գործունեության տեսակի գծով նույն խախտումն է արձանագրվում, գանձվում է տուգանք՝ պակաս հաշվարկված կամ չհաշվարկված հաստատագրված վճարի գումարի չափով: Հարկային մարմնի կողմից, հաշվարկների արդյունքում պետական բյուջեի հանդեպ պարտավորություն առաջանալու դեպքում, հաշվարկվում է նաև օրական տույժ՝ ժամկետանց հարկային պարտավորության 0.15%-ի չափով:

4.6. ՄԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՄԱՍՏԱՏԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ

30 քառակուսի մետր մակերեսից ոչ ավելի առևտրական մակերես ունեցող խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով իրականացվող առևտրական գործունեության համար ուղղիչ գործակիցները սահմանված են ՀՀ կառավարության 31.07.1998թ. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 482 և 29.05.1999թ. և «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 362 որոշումներով⁵, ավտոկանգառների գործունեության, համակարգչային խաղերի կազմակերպման և տեսամազնիտոֆոնների

5 Տե՛ս համապատասխանաբար ՀՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 16, 31.07.1998թ. և ՀՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 15, 11.06.1999թ.:

ու տեսաժապավենների վարձույթի կազմակերպման գործունեության համար՝ ՀՀ կառավարության 31.07.1998թ. թիվ 482 որոշմամբ:

4.7. ՆԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ԻՆՂԵՑՍԱՎՈՐՈՒՄԸ

Օրենքին համապատասխան հաշվարկվող հաստատագրված վճարի ամսական չափը և սահմանային չափերը յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են ճշգրտվել (ավելացվել կամ պակասեցվել) նախորդ տարվա ընթացքում արձանագրված սպառողական գների ինդեքսի չափով (ստորակետից հետո՝ երկու նիշի ճշգրտությամբ):

5. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԸ

5.1. 30 ԶԱՌԱՎՈՒՄԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍԻՑ ՈՉ ԱՎԵԼԻ ԱՌԵՎՏՐԱՎԱՆ ՄԱԿԵՐԵՍ ՈՒՆԵՑՈՂ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ (ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ) ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՌԵՎՏՐԱՎԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման (կիրառումը պարտադիր լինելու) պատճառով գործունեության այս տեսակի մասով, փաստորեն, հաստատագրված վճար վճարող են համարվում Երևան քաղաքում առևտրի իրականացման վայրերից դուրս գտնվող՝ մինչև 7 քառակուսի մետր, Երևան քաղաքից դուրս գտնվող այլ վայրերում առևտրի իրականացման վայրերից դուրս գտնվող՝ մինչև 10 քառակուսի մետր ընդհանուր տարածք ունեցող կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն իրականացնողները (բացառությամբ ստորև նշվող դեպքերի), ինչպես նաև անմիջականորեն բնակելի տարածքից վաճառք իրականացնողները:

Հաստատագրված վճարի կիրառման առումով կրպակ (տաղավար) է համարվում առևտրական գործունեություն իրականացնելու նպատակին հարմարեցված և առևտրական դահլիճ չունեցող շինությունը:

Բնակելի տարածքից (պատուհանից և այլն) անմիջականորեն վաճառք իրականացնելու դեպքում հաստատագրված վճարի չափը, որ-

պես կանոն, հավասարեցվում է 3 քառակուսի մետր տարածք ունեցող կրպակի համար հաշվարկվող հաստատագրված վճարին:

Հաստատագրված վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ ելակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակիցների արտադրյալի 22-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ:

Հաստատագրված վճարի հաշվարկման համար ելակետային տվյալ են համարվում կրպակի (տաղավարի) առևտրական (ընդհանուր) տարածքը՝ քառակուսի մետրերով և առևտրական գործունեության իրականացման օրացույցային օրերի թիվը: Վճարի հաշվարկման համար կիրառվում է գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցը: Վերջինս սահմանվում է «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով և այդ հոդվածի համաձայն ընդունված՝ ՀՀ կառավարության 31.07.1998թ. թիվ 482 և 29.05.1999թ. թիվ 362 որոշումներով: Հաստատագրված վճարի հաշվարկման համար օրենքով նախատեսված դեպքերում կարող են կիրառվել լրացույիչ ուղղիչ գործակիցներ:

Կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն իրականացնողները ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն ներկայացնում են հարկային տեսչություն՝ յուրաքանչյուր տարվա հունիս և դեկտեմբեր ամիսների ընթացքում: Հաստատագրված վճարը վճարվում է մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ: Հաջորդ էջում բերված է կրպակների կողմից վճարման ենթակա հաստատագրված վճարի հաշվարկման համար հարկային մարմին ներկայացվող ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության մասնակի լրացված ձևը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

30 ՄՇ ՄԱԿԵՐԵՄԻՑ ՈՉ ԱՎԵԼԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ ՈՒՆԵՑՈՂ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ (ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ) ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հարկ վճարողի լրիվ անվանումը _____
2. Գտնվելու վայրը _____ ք. Երևան, Հալաբյան փ..... _____
3. Գործունեության իրականացման հասցեն _____ ք. Երևան, Լեհինգրադյան..... _____
4. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)

Ելակետային տվյալներ և ուղղիչ գործակիցներ	Խանութ	Կրպակ (տաղավար)	Բնակելի տարածք
Ելակետային տվյալներ			
Ընդհանուր մակերեսը (մ ²)		6.0	X
Առևտրական տարածքը (մ ²)			
Այլաբնքների զբաղեցրած ցուցադրման մակերեսը			
Ուղղիչ գործակից			
Գտնվելու վայրի հետ կապված		2.0	
Լրացուցիչ ուղղիչ գործակիցներ			
Աղետի գոտու, հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում գտնվող գյուղերի համար			
Բացառապես նկուղային հարկերում տեղադրված լինելու հետ կապված			X

Ամիս	Գործունեության իրականացման օրերը*															Ընդամենը**	
18հ19ուլիս	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15		
	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	
օգոստոս	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15		
	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	
սեպտեմբեր	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15		
	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	
հոկտեմբեր	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15		
	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	
նոյեմբեր	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15		
	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	
դեկտեմբեր	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15		
	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	

Հարկ վճարողի (պաշտոնատար անձի)

ստորագրությունը

Կ.Տ.

թիվ «10» հունիսի 2006 թ.

գրանցված է _____ տիպ կողմից

թիվ _____ « _____ » 200 թ.

Կ.Տ.

* Գործունեության իրականացման օրերը պարտադիր կերպով նշվում են օղակով (12), իսկ հանգստյան օրերը՝ անկյունագծից անկյունագիծ խաչաձև ջնջելու միջոցով (X): Լրիվ ամիս (բոլոր օրերը) աշխատել նախատեսելու դեպքում օղակի ձևով նշումներ չեն կատարվում:

** Նշումը կատարվում է թվով և տառերով:

Հաշվետու եռամսյակի ընթացքում (անկախ գործունեության իրականացման օրերի թվից) առևտրական տարածքի 1 քառակուսի մետրի հաշվով ապրանքաշրջանառության ծավալը 310 հազար դրամը (սահմանային չափը) գերազանցելու դեպքում տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաստատագրված վճարի փոխարեն գործունեության այս տեսակի համար հաշվարկվում և վճարվում են հարկման ընդհանուր կարգով նախատեսված հարկերը (եկամտահարկ (շահութահարկ) և ԱԱՀ): Այս դեպքում հաշվարկված հարկերի գումարներից (ըստ հարկատեսակների) պակասեցվում են տվյալ հաշվետու եռամսյակի համար վճարված հաստատագրված վճարի գումարները: Հարկ վճարողը յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի համար ներկայացնում է «30 մ² մակերեսից ոչ ավելի առևտրական տարածք ունեցող խանութների, կրպակների (տաղավարների) հաստատագրված վճարների հաշվարկման ցուցանիշների սահմանային չափերի վերաբերյալ» հայտարարություն (տես՝ էջ 18-ում բերված հայտարարության ձևը):

Նշված գործունեության տեսակի մասով հաստատագրված վճար վճարող չեն համարվում.

- սեփական արտադրության արտադրանքն ինքնուրույնաբար իրացնողները,
- դեղատների միջոցով առևտուր իրականացնողները՝ դեղանյութերի, դեղամիջոցների և բժշկական պարագաների վաճառքի մասով,
- գազի վաճառքի կետերում, ինչպես նաև դրանցում միաժամանակ շարժիչի յուղերի և քսայուղերի գծով առևտրական գործունեություն իրականացնողները,
- մամուլի կրպակներում թերթերի, հանդեսների, փաստավավերագրերի, տեղեկագրերի, պարբերականների վաճառք իրականացնողները:

Կրպակներում (տաղավարներում), թվարկված ապրանքներից տարբերվող՝ այլ ապրանքներ իրացվելու դեպքում, բացի ընդհանուր կարգով վճարվող հարկերից, նշված անձինք վճարում են նաև հաստատագրված վճար, եթե հաշվետու եռամսյակի արդյունքներով ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում այդ ապրանքների վաճառքից ստացված հասույթի տեսակարար կշիռը գերազանցում է 10, իսկ մամուլի կրպակներում՝ 50 տոկոսը: Այս դեպքում յուրաքանչյուր եռամսյակ հարկային մարմին ներկայացվում է «30 մ²-ից ոչ ավելի տարածք ու-

տարածքային հարկային
տեսչության պետ՝ _____

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
30 Մ² ՄԱԿԵՐԵՍԻՑ ՈՉ ԱՎԵԼԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ ՈՒՆԵՑՈՂ
ԽԱՆՈՒԹՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ (ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ)
ՀԱՍՏԱՏԱԳՐԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2006 թ. _____ IV _____
(եռամսյակ)

(վճարողի լրիվ անվանումը)

Գործունեության իրականացման հասցեն _____ ք. Երևան, Լենինգրադյան _____

Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) _____

--	--	--	--	--	--	--	--

h/h	Ցուցանիշը	Չափի միավոր	Թվային արտահայտությամբ
1	2	3	4
1	Սահմանային չափը	հազ.դրամ	310.0
2	Եռամսյակի ապրանքաշրջանառության ծավալը. այդ թվում՝	հազ.դրամ	1500.0
2.1	ԱԱՀ-ից ազատված ապրանքատեսակների վաճառքից ստացված հասույթը	հազ.դրամ	350.0
		տես.կշիռը (տող 2.1 / տող 2 x 100)	23.3 %
2.2	առանց մաքսային մարմիններում ԱԱՀ վճարելու՝ վճարողի կողմից ՀՀ ներմուծված ապրանքների վաճառքից ստացված հասույթը	հազ.դրամ	500.0
		տես.կշիռը (տող 2.2 / տող 2 x 100)	33.3 %
3	Առևտրական տարածքը	մ ²	6.0
4	Ապրանքաշրջանառության ծավալը առևտրական տարածքի մեկ մ ² հաշվով (տող 2 / տող 3)	հազ.դրամ	250.0

Վճարողի
(պաշտոնատար անձի)
ստորագրությունը

գրանցված է _____ տիտ կողմից
թիվ _____ “ _____ ” 200__ թ.

Կ. Տ.

Կ. Տ.

«12» հունվար 2007 թ.

ԽՈՒՄԻՆԻՍՏՐԱՏՐԱՏՈՐԱՏԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻ
 _____ տարածքային հարկային
 տեսչության պետ՝ _____

ՏԵՂԵԿԱՆՔ
30 Մ² ՄԱԿԵՐԵՍԻՑ ՈՉ ԱՎԵԼԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ ՈՒՆԵՑՈՂ
ԽԱՆՈՒԹՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ (ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ) ՄԻՋՈՑՈՎ
ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳՐԱՆՔՆ ԻՆՔՆՈՒՐՈՅՆԱԲԱՐ
ԻՐԱՑՆՈՂՆԵՐԻ, ԳԵՂԱՏՆԵՐԻ, ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԵՏԵՐԻ ԵՎ
ՄԱՄՈՒԼԻ ԿՐՊԱԿՆԵՐԻ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2006 թ _____ IV _____
 (եռամսյակ)

(վճարողի լրիվ անվանումը)

Վաճառահանման կետի տեսակը _____

Գործունեության իրականացման հասցեն _____ ք. Երևան, Լենինգրադյան _____

Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)

--	--	--	--	--	--	--	--

h/h	Ցուցանիշը	Չափի միավոր	Թվային արտահայտությամբ
1	2	3	4
1	Եռամսյակի ապրանքաշրջանառության ծավալը. այդ թվում՝	հազ.դրամ	1800.0
1.1	այլ ապրանքների վաճառքից ստացված հասույթը	հազ.դրամ	700.0
2	Այլ ապրանքների վաճառքից ստացված հասույթի տեսակարար կշիռը ապրանքաշրջանառության ծավալի մեջ (տող1.1 / տող1 x 100)	%	38.9

Վճարողի գրանցված է _____ տիպ կողմից
 (պաշտոնատար անձի) թիվ _____ “ _____ ” 200__ թ.
 ստորագրությունը

Կ. Տ. Կ. Տ.

«14» հունվար 2007 թ.

նեցող խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով սեփական արտադրանքն իրացնողների, դեղատների, գազի վաճառքի կետերի և մամուլի կրպակների ապրանքաշրջանառության համամասնությունների մասին» տեղեկանք (տե՛ս էջ 19-ում բերված տեղեկանքի ձևը):

5.2. ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեություն է համարվում առևտրական (կամ այլ) գործունեության իրականացման համար կազմակերպչի կողմից տարածքների տրամադրումը:

Առևտրի իրականացման վայր կազմակերպելու համար հաստատագրված վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ էլակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակիցի (գործակիցների) արտադրյալի 110-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ: Ելակետային տվյալներ են համարվում առևտրի իրականացման վայրի փաստացի օգտագործվող մակերեսը (արտահայտված քառակուսի մետրերով) և ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացույցային օրերի թիվը:

Հաստատագրված վճարի մեծության հաշվարկման նպատակով փաստացի օգտագործվող մակերեսի նկատմամբ կիրառվում են առևտրի իրականացման օժանդակ մակերեսները հաշվի առնող գործակիցը (1,2) և առևտրական դահլիճ ունեցող մշտական շինություններում գտնվող տարածքների համար սահմանված գործակիցը (0,7): Հաստատագրված վճարի մեծության հաշվարկման ժամանակ կիրառվում է առևտրի իրականացման վայրի գտնվելու տեղը հաշվի առնող ուղղիչ գործակից: Գտնվելու տեղը հաշվի առնող ուղղիչ գործակիցները սահմանվում են օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետով:

Լրացույցիչ ուղղիչ գործակից (2.0) կիրառվում է այն դեպքում, երբ առևտրի իրականացման վայրի փաստացի օգտագործվող ընդհանուր մակերեսի մեկ քառակուսի մետրի հաշվով առևտրական գործունեություն իրականացնողից կազմակերպչի կողմից գանձվող վճարի մեծությունը գերազանցում է նույն մակերեսի համար կազմակերպչի կողմից վճարվող հաստատագրված վճարի մեծության 5-ապատիկը (սահմանային չափը):

Առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեություն իրականացնողները էլակետային տվյալների և ուղղիչ գործակիցների

վերաբերյալ հայտարարություն ներկայացնում են հարկային տեսչություն՝ յուրաքանչյուր ամիս: Հաստատագրված վճարը վճարվում է մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

Առևտրի իրականացման վալրի կազմակերպման գործունեություն իրականացնողները հաստատագրված վճարի մեծությունը հիմնավորելու նպատակով յուրաքանչյուր ամիս հարկային մարմին են ներկայացնում հայտարարություն՝ հաստատագրված վճարների հաշվարկման ցուցանիշների սահմանային չափերի վերաբերյալ:

Առևտրի իրականացման վալրի կազմակերպման գործունեություն իրականացնողները յուրաքանչյուր ամիս ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 1-ի թիվ 298 որոշմամբ սահմանված կարգով ներկայացնում են տեղեկություններ առևտրի իրականացման վալրում առևտրական գործունեություն իրականացնողների վերաբերյալ:

Առևտրի իրականացման վալրի կազմակերպման գործունեություն իրականացնողները վերը նշված տեղեկություններում առևտրի իրականացման վալրում առևտրական գործունեություն իրականացնողի վերաբերյալ տեղեկություն չներառելու կամ կեղծ տեղեկություն ներառելու դեպքում վճարում են տուգանք՝ յուրաքանչյուր անձի համար՝ 100.000 դրամի չափով: Վերը նշված տեղեկություններն ընդհանրապես չներկայացնելու դեպքում առևտրի իրականացման վալրի կազմակերպման գործունեություն իրականացնողը տուգանվում է 500 000 դրամի չափով:

5.3. ՇԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հանրային սննդի ոլորտում գործունեություն է համարվում կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների ու կիսաֆաբրիկատների պատրաստումը և դրանց սպառման կազմակերպումը: Հանրային սննդի կազմակերպման գործունեության համար հաստատագրված վճար վճարողներ են համարվում անմիջականորեն այդ ոլորտում գործունեություն իրականացնողները, ինչպես նաև այն անձինք, ովքեր թեպետև անմիջականորեն վերը նշված արտադրատեսակների պատրաստում և սպառում չեն իրականացնում, սակայն հանրային սննդի սպասարկման սրահը հանձնել են նման գործունեություն իրականացնող անձանց՝ առանց անշարժ գույքի հետ կապված իրավունքների պետական գրանցման: Հանրակրթական դպրոցների,

պրոֆտեխնիկական ուսումնարանների, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շենքերում տեղադրված հանրային սննդի օբյեկտներում իրականացվող գործունեությունը հաստատագրված վճարով չի հարկվում:

Հանրային սննդի ոլորտում գործունեության համար հաստատագրված վճարը հաշվարկվում է որպես հանրային սննդի սպասարկման սրահի մակերեսի (արտահայտված քառ. մետրով) ուղղիչ գործակիցների 2000-ապատիկի արտադրյալ՝ դրամական արտահայտությամբ: Հաստատագրված վճարի հաշվարկման նպատակով հանրային սննդի սպասարկման սրահ է համարվում խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված տարածքը, իսկ բացօթյա վայրերում՝ հանրային սննդի գործունեության իրականացման ընդհանուր մակերեսը: Արտաքին բուֆետների (շարժական և հատուկ սարքավորումներով խոհարարական արտադրանքի պատրաստմամբ և սպասարկմամբ զբաղվող) և սպասարկման սրահ չունեցող այլ վայրերի համար սպասարկման մակերեսն ընդունվում է 20 քառակուսի մետրի չափով: Հաստատագրված վճարի հաշվարկման ուղղիչ գործակիցները (այդ թվում՝ լրացույցիչ) սահմանված են «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով:

Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնողները ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն ներկայացնում են հարկային տեսչություն՝ մինչև այդ ոլորտում գործունեություն սկսելն ու հետագայում՝ յուրաքանչյուր տարվա հունիս և դեկտեմբեր ամիսների ընթացքում: Հաստատագրված վճարը վճարվում է մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնողները եռամսյակի համար հաստատագրված վճարի փոխարեն վճարում են շահութահարկ (եկամտահարկ) և ավելացված արժեքի հարկ, եթե եռամսյակի ընթացքում (անկախ գործունեության իրականացման օրերի թվից) նրանց ապրանքաշրջանառության ծավալը սպասարկման մակերեսի մեկ քառակուսի մետրի հաշվով գերազանցել է 200 հազար դրամը (սահմանային չափը): Այս դեպքում նրանց կողմից տվյալ եռամսյակի համար վճարված հաստատագրված վճարում ներառվող շահութահարկը (եկամտահարկը) և ավելացված արժեքի հարկի գումարները պակասեցվում են վճարվելիք շահութահարկի (եկամտահարկի) և ավելացված արժեքի հարկի գումարներից: Սահմանային չափը հատելու

կամ չհատելու փաստն արձանագրելու համար հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնողները յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո ներկայացնում են հայտարարություն՝ հանրային սննդի ոլորտում հաստատագրված վճարների հաշվարկման ցուցանիշների սահմանային չափերի վերաբերյալ:

5.4. ԱՎՏՈՏՐԱՆԱԿՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ավտոտրանսպորտային գործունեության համար հաստատագրված վճար վճարողներ են համարվում ավտոտրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրում կամ բեռնափոխադրում (այդ թվում՝ նախնական պատվերով) իրականացնողները, բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցները բացառապես սեփական ներարտադրական (ներտնտեսական) նպատակներով օգտագործողների: Հաստատագրված վճարը հաշվարկվում է որպես ելակետային տվյալի և համապատասխան ուղղիչ գործակցի (գործակիցների) և բազմապատիկ մեծության (2000-ի) արտադրյալ՝ դրամական արտահայտությամբ: Թեթև մարդատար մեքենաներով ուղևորափոխադրման (տաքսիի) դեպքում որպես ելակետային տվյալ ընդունվում է 1,0, ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) ուղևորափոխադրումների դեպքում՝ ավտոբուս արտադրողի (վերասարքավորողի) կողմից մեքենայի սրահում տեղադրված նստատեղերի քանակը, իսկ բեռնափոխադրումների դեպքում՝ ավտոմեքենայի բեռնատարողությունը (արտադրողի կողմից սահմանված՝ տեխնիկական և շահագործման տվյալներով բեռնման օպտիմալ կշիռը)՝ արտահայտված տոննաներով:

Ավտոտրանսպորտային գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ուղղիչ գործակիցները սահմանված են «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով: Օրենքի 39-րդ հոդվածով սահմանվել են հաստատագրված վճարի հաշվարկման առանձնահատկություններ: Մասնավորապես, սահմանվել է՝ եթե վճարողի կողմից նույն ամսվա ընթացքում նույն տրանսպորտային միջոցով մատուցվում են ավտոտրանսպորտային փոխադրումների այնպիսի ծառայություններ, որոնց համար սահմանված են տարբեր ելակետային տվյալներ և ուղղիչ գործակիցներ, ապա հաստատագրված վճարը հաշվարկվում է առավելագույն ելակետային տվյալներով և ուղղիչ գործակիցներով:

5.5. ՎԱՐՍԱՎԻՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Վարսավիրանոց է համարվում վարսավիրական ծառայությունն մատուցելու համար համապատասխան սարքավորումներով և կահավորանքով աշխատատեղ (աշխատատեղեր) ունեցող մշտական կամ ժամանակավոր շինությունը: Այս ծառայությունների մասով հաստատագրված վճար վճարողներ են համարվում վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնողները: Վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեության հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է ելակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակցի արտադրյալի 500 -ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ:

Հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալներն են վարսավիրական ծառայության աշխատատեղերի քանակը և ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացույցային օրերի թիվը: Վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեության մասով հաստատագրված վճարի ուղղիչ գործակիցները սահմանված են ըստ հանրապետության տարածքում վարսավիրանոցի գտնվելու վայրի: Երևան քաղաքի համար ուղղիչ գործակից է սահմանված 1.0, մարզկենտրոնների, Աբովյան և Վաղարշապատ քաղաքների համար՝ 0.8, այլ վայրերի համար՝ 0.6:

5.6. ԱՎՏՈՏԵԽՍԱԿԱՍԱՐԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ (ԿԵՏԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ավտոտեխսպասարկման կայան (կետ) է համարվում ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման համար աշխատատեղ (աշխատատեղեր) ունեցող մշտական կամ ժամանակավոր շինությունը: Ընդ որում՝ ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղ է համարվում ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկման տեսակների մեկ ամբողջական գործընթացի ապահովման համար հատուկ սարքավորումներով կահավորված տարածքը: Ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության մասով հաստատագրված վճար վճարող են համարվում ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման գործունեություն իրականացնողները:

Ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղերի քանակի (ելակետային տվյալի), ուղղիչ գործակցի (Երևան քաղաքի համար՝ 1.0, այլ վայրերի համար՝ 0.8) և բազմապատիկ մեծության (15,000-ապատիկի) արտադրյալի չափով՝ դրամական արտահայտությամբ:

Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման գործունեություն իրականացնողները, որոնց ամսական իրացման շրջանառությունը մեկ աշխատատեղի հաշվով գերազանցում է 800 հազար դրամը (սահմանային չափը), տվյալ ամսվա համար հարկերը վճարում են ընդհանուր կարգով (վճարում են շահութահարկ (եկամտահարկ) և ավելացված արժեքի հարկ), որոնցից համապատասխանաբար հաշվանցում են վճարված հաստատագրված վճարում ներառվող՝ հարկերի հաշվարկային մեծությանը համապատասխան որոշվող շահութահարկի (եկամտահարկի) և ավելացված արժեքի հարկի գումարները: Վճարվող հարկերի (կամ հաստատագրված վճարի) մեծությունը հիմնավորելու համար ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման գործունեություն իրականացնողները յուրաքանչյուր ամիս, մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, հարկային մարմին են ներկայացնում հայտարարություն՝ հաստատագրված վճարների հաշվարկման ցուցանիշների սահմանային չափերի վերաբերյալ:

5.7. ԲԵՆԳԻՆԻ ԵՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՍԱՆՐԱԾԱՆ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Բենզինի և (կամ) դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի գործունեության համար հաստատագրված վճար վճարողներ են համարվում վառելիքի նշված տեսակներով ավտոտրանսպորտային միջոցների լիցքավորման համար նախատեսված (հարմարեցված) սարքավորումների միջոցով բենզինի և (կամ) դիզելային վառելիքի մանրածախ վաճառք իրականացնողները:

Հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների արտադրյալի 30,000 - ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ: Բենզինի և (կամ) դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի գործունեության համար

հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալ է համարվում բենզինի և (կամ) դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի կետերում տեղակայված բենզալցման (կամ դիզելային վառելիքի լցման) խողովակների քանակը: Լիցքավորումը բացառապես տարանների միջոցով իրականացնելու (լիցքավորման խողովակների բացակայության) դեպքում հաստատագրված վճարի չափը հավասարեցվում է բենզալցման (կամ դիզելային վառելիքի լցման) մեկ խողովակի միջոցով իրականացվող գործունեության համար սույն օրենքին համապատասխան հաշվարկված վճարի չափին: Գործունեության այս տեսակի մասով հաստատագրված վճարի հաշվարկման ուղղիչ գործակիցները սահմանված են մանրածախ վաճառքի կետի գտնվելու վայրի հետ կապված: Երևան քաղաքում գտնվող բենզինի և (կամ) դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի կետերի համար սահմանված է 1.2 , Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի մարզերում գտնվողների համար՝ 1.0, այլ վայրերում գտնվողների համար՝ 0.8 ուղղիչ գործակից:

5.8. ԱՎՏՈՎԱՆՉԱՌՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ավտոկանգառների գործունեություն է համարվում ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանման համար առանձնացված տարածքում (ավտոկանգառում) հատուցման դիմաց դրանց կայանման (ներառյալ՝ գիշերային ժամերին) ապահովումը (կազմակերպումը):

Ավտոկանգառների գործունեության հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է ելակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակիցի (գործակիցների) արտադրյալի 5-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ: Գործունեության այս տեսակի համար ելակետային տվյալներ են համարվում ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանման համար առանձնացված ընդհանուր տարածքը (արտահայտված քառակուսի մետրերով) և ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացույցային օրերի թիվը: Ուղղիչ գործակիցները Երևան քաղաքի տարբեր մասերում (տարածքներում) սահմանված են ՀՀ կառավարության 31.07.1998թ. թիվ 482 որոշմամբ, իսկ այլ վայրերի համար՝ օրենքի 64-րդ հոդվածով (սահմանված է 0,8):

5.9. ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԶԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Արդյունագործական ձկնորսության համար հաստատագրված վճար վճարող են համարվում այն կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնք շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով ջրային ավազանում հատուկ որսագործիքներով, մասնավորապես՝ դնովի ցանցով, դնովի, ձգովի և քսակավոր ոռկաններով իրականացնում են ձկնորսություն:

Հաստատագրված վճարը հաշվարկվում է ելակետային տվյալների, ուղղիչ գործակիցների արտադրյալի 150-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ: Գործունեության այս տեսակի համար ելակետային տվյալներ են համարվում ամսվա ընթացքում արդյունագործական ձկնորսության գործունեության իրականացման օրացույցային օրերի թիվը և որսագործիքների քանակը: Ուղղիչ գործակիցները վերաբերում են որսագործիքների տեսակներին: Արդյունագործական ձկնորսության գործունեության իրականացման որսագործիքների տեսակի հետ կապված ուղղիչ գործակիցները սահմանված են օրենքով և նշված են ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների հայտարարության սահմանված ձևում:

5.10. ԽԱՂԱՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Խաղատուն է համարվում այն խաղասրահը, որի ներքին կամ արտաքին կողմից ցուցադրվում է «խաղատուն» կամ «կազինո» բառը կամ դրանց օգտագործմամբ բառակապակցությունները՝ հայերեն կամ օտար լեզուներով, կամ որտեղ շահագործվում է թեկուզ մեկ խաղասեղան կամ քսանից ավելի խաղային ավտոմատ, կամ երկուսն իրար հետ՝ անկախ դրանցից յուրաքանչյուրի քանակից:

Խաղատան կազմակերպողների (խաղասրահում շահումով խաղեր անցկացնողների) կողմից յուրաքանչյուր ամիս վճարման ենթակա է խաղասեղանների քանակի և բազմապատիկ մեծության (2,500,000-ապատիկի) արտադրյալը՝ դրամական արտահայտությամբ: Խաղատներում խաղային ավտոմատների շահագործման դեպքում դրանց մասով հաստատագրված վճարը հաշվարկվում է շահումով խաղային ավտոմատների համար սահմանված կարգով:

5.11. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱԶԱԼՑՄԱՆ (ԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Գազալցման կայան (կետ) է համարվում ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) համար հարմարեցված սարքավորումների համալիրը: Այդպիսի համալիր շահագործողներն (ավտոտրանսպորտային միջոցների գազալիցքավորում կազմակերպողները) էլ համարվում են ավտոտրանսպորտային միջոցների գազալիցքավորման գործունեության մասով հաստատագրված վճար վճարողներ:

Հաստատագրված վճարը վճարվում է ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի արտադրյալի 1,500,000-ապատիկի չափով, բայց ոչ պակաս ամսվա իրացված գազի ընդհանուր ծավալի նկատմամբ մեկ մետր խորանարդ գազի հաշվով 20 դրամ հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարից: Ընդ որում, որպես ելակետային տվյալ օրենքով սահմանված է գազալցման կայանում (կետում) տեղակայված գազալցման (գազալիցքավորման) խողովակների քանակը, իսկ գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակից՝ Երևան քաղաքում գտնվող գազալցման կայանի (կետի) համար՝ 1.0, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի մարզերում գտնվողի՝ 0.75, այլ վայրերում գտնվողի համար՝ 0.6:

Ավտոտրանսպորտային միջոցների գազալիցքավորման գործունեություն իրականացնողները ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն ներկայացնում են հարկային տեսչություն յուրաքանչյուր ամիս: Հաստատագրված վճարը վճարվում է մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողները, ՀՀ կառավարության 2004 թ. ապրիլի 14-ի թիվ 484-Ն որոշմանը համապատասխան, յուրաքանչյուր ամսվա համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում տեղեկություններ տվյալ ամսվա ընթացքում գազալցման տվյալ կայանի (կետի) միջոցով իրացված գազի ֆիզիկական ծավալների մասին՝ արտահայտված խորանարդ մետրերով: Տեղեկությունները ներկայացվում են վերը նշված որոշմամբ սահմանված ձևով, մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը:

Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողներն ամսվա ընթացքում իրացված գազի ֆիզիկական ծավալների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու կամ ներկայացվող տեղեկություններում իրացման ծավալները թերհայտարարագրելու դեպքում վճարում են տուգանք՝ 500,000 դրամի չափով:

5.12. ՃԱՆՈՒՄՈՎ ԽԱՂԱՅԻՆ ԱԿՏՈՍԱՏՆԵՐԻ ՃԱՇԱԳՈՐԾՈՒՄ

Շահումով խաղային ավտոմատներ են համարվում ծրագրավորված ավտոմատացված խաղերի անցկացման սարքերը (այդ թվում՝ լոտոտրոն, բինգո և մեխանիկական վիճակահանության համար ծրագրավորված այլ սարքեր), որոնցով խաղերի անցկացման ժամանակ շահողը որոշվում է ավտոմատներում պարունակվող հատուկ ծրագրի կամ ծրագրերի միջոցով՝ խաղերի մասնակցի անմիջական կամ ոչ անմիջական մասնակցությամբ: Հեռուստատեսության միջոցով լոտոտրոն, բինգո և մեխանիկական վիճակահանության համար ծրագրավորված այլ սարքեր շահագործողները՝ հեռուստատեսության միջոցով մման սարքերի շահագործման գործունեության մասով հաստատագրված վճար չեն վճարում:

Լոտոտրոնի, բինգո և մեխանիկական վիճակահանության համար ծրագրավորված այլ սարքերի շահագործման դեպքում հաստատագրված վճարը որոշվում է որպես խաղասրահի քառակուսի մետրով արտահայտված մակերեսի և բազմապատիկ մեծության (15,000) արտադրյալ՝ դրամական արտահայտությամբ: Այլ ավտոմատների շահագործման դեպքում հաստատագրված վճարը որոշվում է որպես տեղադրված (առկա) ավտոմատների քանակի և բազմապատիկ մեծության (75,000) արտադրյալ՝ դրամական արտահայտությամբ:

5.13. ԻՆՏԵՐՆԵՏ ՃԱՆՈՒՄՈՎ ԽԱՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ինտերնետ շահումով խաղ է համարվում «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ անմիջականորեն (խաղասրահում) և (կամ) ինտերնետ կամ նմանօրինակ ցանկացած գլոբալ համակարգի և ցանկացած համակարգված ցանցային կապուղիների միջոցով շահումով խաղերի կազմակերպումը: Շարժական կապի երկրային ցանցի միջոցով մա-

տույվող տվյալների հաղորդման ծառայությունների և (կամ) կարճ հաղորդագրությունների միջոցով ինտերակտիվ խաղարկությունների կազմակերպումն ինտերնետ շահումով խաղ չի համարվում:

Ինտերնետ կամ մամուլի միջոցով ցանկացած գլոբալ համակարգի և ցանկացած համակարգված ցանցային կապուղիների միջոցով ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 1,000,000-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ: Այս դեպքում ելակետային տվյալ է համարվում ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար նախատեսված ինտերնետային կայքերի թիվը (անկախ ամսվա ընթացքում գործունեության փաստացի իրականացման օրերի քանակից): Առանց ինտերնետ կայքերի վերաբերյալ ելակետային տվյալ ներկայացնելու՝ ինտերնետ տոտալիզատորի կամ ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար կազմակերպչից գանձվում է տուգանք՝ 5,000,000 դրամի չափով, իսկ մեկ տարվա ընթացքում, նույն գործունեության տեսակի գծով նույն խախտումն արձանագրվելու դեպքում՝ 10,000,000 դրամի չափով (կիրառվում է կրկնակի չափով տուգանք):

Ամիջակահորեն (խաղասրահում) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 50,000-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ: Այս դեպքում ելակետային տվյալ է համարվում տվյալ ամսվա ընթացքում խաղասրահում ինտերնետ շահումով խաղի կազմակերպման համար նախատեսված համակարգիչների քանակը (անկախ դրանց փաստացի օգտագործման օրերի քանակից):

Ամիջակահորեն (խաղասրահում) ինտերնետ շահումով խաղի կազմակերպման համար նախատեսված համակարգիչները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հարկային մարմնում ենթակա են դրոշմավորման, կնքման և հաշվառման: Օրենքով սահմանված այս պահանջը չկատարելու համար կազմակերպչից գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր չդրոշմավորված, չկնքված և չհաշվառված համակարգչի համար՝ 1.000.000 դրամի չափով, իսկ մեկ տարվա ընթացքում նույն գործունեության տեսակի գծով նույն խախտումն արձանագրվելու դեպքում նշված տուգանքը կրկնապատկվում է:

5.14. ՀԱՍՏԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Հաստատագրված վճարով հարկվող գործունեություն է նաև համակարգչային խաղերի կազմակերպումը: Հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է որպես ելակետային տվյալի, ուղղիչ գործակցի և բազմապատիկ մեծության (10000-ապատիկի) արտադրյալ՝ դրամական արտահայտությամբ: Ելակետային տվյալ է համարվում տեղակայված մոնիտորների ընդհանուր քանակը: Աղետի գոտու, հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի, ինչպես նաև հանրապետության գյուղական վայրերի համար ուղղիչ գործակից սահմանված է 1.0-ի, հանրապետության մարզերի (բացի մարզկենտրոններից, Աբովյան և Վաղարշապատ քաղաքներից) համար՝ 1.5-ի, հանրապետության մարզկենտրոնների, ինչպես նաև Աբովյան և Վաղարշապատ քաղաքների համար՝ 2.0-ի չափով: Երևան քաղաքի տարբեր հատվածներում համակարգչային խաղերի կազմակերպման գործունեության մասով ուղղիչ գործակիցները սահմանված են ՀՀ կառավարության 31.07.1998թ. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 482 որոշմամբ:

5.15. ՏԵՍԱՍԱԳՆԻՏՈՖՈՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՍԱԺԱՊԱԿԵՆՆԵՐԻ ԿԱՐՁՈՒՅՑ

Գործունեության այս տեսակի մասով վճարողներ են համարվում տեսաժապավեններ և տեսամագնիտոֆոններ վարձույթով տրամադրողները: Հաստատագրված վճարի ամսական չափը սահմանվում է տեսաժապավենների (տեսամագնիտոֆոնների) վարձույթի կետի գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակցի 40000-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ: Աղետի գոտու, հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի, ինչպես նաև հանրապետության գյուղական վայրերի համար ուղղիչ գործակից սահմանված է 1.0-ի, հանրապետության մարզերի (բացի մարզկենտրոններից, Աբովյան և Վաղարշապատ քաղաքներից) համար՝ 1.2-ի, հանրապետության մարզկենտրոնների, ինչպես նաև Աբովյան և Վաղարշապատ քաղաքների համար՝ 1.7-ի չափով: Երևան քաղաքի տարբեր հատվածներում այդ գործունեության մասով ուղղիչ գործակիցները սահմանված են ՀՀ կառավարության 31.07.1998թ. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 482 որոշմամբ:

5.16. ՎԻՃԱԿԱՆԱԴԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Վիճակախաղերի կազմակերպման համար հաստատագրված վճար վճարողներ են հանդիսանում վիճակախաղերի կազմակերպիչները: Վիճակախաղ են համարվում «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկա հանդիսացող գործունեության հետևյալ տեսակները.

- ա) խաղարկությունով և ոչ խաղարկությունով, ինչպես նաև համակցված վիճակախաղերի կազմակերպումը,
- բ) տոտալիզատորի կազմակերպումը,
- գ) անմիջականորեն (խաղասրահում) և (կամ) ինտերնետ կամ նմանօրինակ ցանկացած գլոբալ համակարգի և ցանկացած համակարգված ցանցային կապուղիների միջոցով տոտալիզատորի կազմակերպումը, բացառությամբ շարժական կապի երկրային ցանցի միջոցով մատուցվող տվյալների հաղորդման ծառայությունների և (կամ) կարճ հաղորդագրությունների միջոցով ինտերակտիվ խաղարկությունների:

Խաղարկությունով և ոչ խաղարկությունով, ինչպես նաև համակցված վիճակախաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 20 տոկոսի չափով: Գործունեության այս տեսակի դեպքում հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալ է համարվում ամսվա ընթացքում անցկացված բոլոր խաղարկությունների համար իրացված վիճակախաղերի տոմսերի ընդհանուր արժեքը:

Տոտալիզատորի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 50.000-ապատիկի չափով: Տոտալիզատորի կազմակերպման համար հաստատագրված վճարի ելակետային տվյալ է համարվում տվյալ ամսվա ընթացքում տոտալիզատորի կազմակերպիչ կողմից խաղադրույքների ընդունման համար նախատեսված համակարգիչների քանակը (անկախ դրանց փաստացի օգտագործման օրերի քանակից):

Ինտերնետ կամ նմանօրինակ ցանկացած գլոբալ համակարգի և ցանկացած համակարգված ցանցային կապուղիների միջոցով ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 1.000.000-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ: Գործունեության

այս տեսակի դեպքում հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալ է համարվում ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված ինտերնետային կայքերի թիվը (անկախ ամսվա ընթացքում գործունեության փաստացի իրականացման օրերի քանակից):

Անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 50.000-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ: Անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար հաստատագրված վճարի ելակետային տվյալ է համարվում տվյալ ամսվա ընթացքում խաղասրահում ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված համակարգիչների քանակը (անկախ դրանց փաստացի օգտագործման օրերի քանակից):

Տոտալիզատորի կազմակերպման համար, ինչպես նաև՝ անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված համակարգիչները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ենթակա են հարկային մարմնում կնքման և հաշվառման:

5.17. ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՑՆՑՈՒՂԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպում հասկացությունն իր մեջ ներառում է, մասնավորապես, ցնցուղարանների, բաղնիքների, սաունաների և շոգեբաղնիքների կազմակերպումը: Սաունա են համարվում օդի տաքացման սարքավորում ունեցող բաղնիքները (ֆիննական սաունա, թուրքական բաղնիք), իսկ շոգեբաղնիք՝ գոլորշի արտադրելու սարքավորում (հնարավորություն) ունեցող բաղնիքները (ռուսական բաղնիք):

Բաղնիքների և (կամ) ցնցուղարանների կազմակերպման ոլորտում գործունեության համար հաստատագրված վճարի մեծությունը հաշվարկվում է (կիրառվում է ուղղիչ գործակից), կախված այն հանգամանքից, թե բաղնիքները և ցնցուղարանները ընդգրկված են սաունաների և (կամ) շոգեբաղնիքների տարածքում, թե ոչ: Եթե դրանք ընդգրկված են սաունաների և (կամ) շոգեբաղնիքների տարածքում, ապա հաստատագրված վճարի հաշվարկման համար կիրառվում է 1.0 ուղղիչ գործա-

կից, իսկ եթե ընդգրկված չեն, ապա՝ 0.5 գործակից: Հաստատագրված վճարի հաշվարկման նպատակով որպես շենք-շինության ընդհանուր մակերես ընդունվում է այն մակերեսը, որտեղ, ըստ էության, իրակա-նացվում է բաղնիքների և ցնցուղարանների գործունեություն, և որն իր մեջ ներառում է այդ ծառայությունից օգտվողներին (սպառողնե-րին) մատուցվող՝ ինչպես լողանալու համար հատուկ սարքավորված, այնպես էլ այլ ծառայությունների և ժամանցի համար նախատեսվող (օգտագործվող) շենք-շինությունում գտնվող տարածքը:

Բաղնիքների և (կամ) ցնցուղարանների կազմակերպման գործու-նեության հաստատագրված վճարը յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկվում է որպես ելակետային տվյալի (բաղնիքների և (կամ) ցնցուղարանների գործունեության կազմակերպման շենք-շինության քառակուսի մետրով արտահայտված մակերեսի), ուղղիչ գործակցի և օրենքով սահմանված թվի (2000) արտադրյալ՝ դրամական արտահայ-տությամբ: Օրինակ, եթե բաղնիքի կազմակերպման շենք-շինության մակերեսը 500 քառ. մետր է, և բաղնիքն ընդգրկված չէ սաունաների և (կամ) շոգեբաղնիքների տարածքում, ապա տվյալ ամսվա հաստա-տագրված վճարը կկազմի 500,0 հազ.դրամ (500 x 0,5 x 2000):

Բաղնիքների և (կամ) ցնցուղարանների գործունեության կազմա-կերպիչները ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերա-բերյալ հայտարարություն ներկայացնում են հարկային տեսչություն՝ մինչև գործունեություն սկսելը և հետագայում՝ յուրաքանչյուր տարվա հունիս և դեկտեմբեր ամիսների ընթացքում:

5.18. ԲԻԼԻԱՐԴ ԽԱՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Բիլիարդ խաղի կազմակերպման գործունեության համար հաս-տատագրված վճար վճարողներ են համարվում այդ խաղը կազմակեր-պողները: Կազմակերպիչների կողմից յուրաքանչյուր ամսվա համար հաստատագրված վճարի չափը որոշվում է ելակետային տվյալի և համապատասխան ուղղիչ գործակցի 20000-պատիկի չափով (դրամա-կան արտահայտությամբ): Որպես ելակետային տվյալ համարվում է տեղադրված խաղասեղանների քանակը, իսկ որպես ուղղիչ գործակից՝ Երևան քաղաքի համար՝ 2,0, Երևան քաղաքից դուրս՝ 1,0 գործակիցը: Գործունեության այս տեսակի համար սահմանային չափ սահմանված չէ:

ՕՐԻՆԱԿ

Եթե Երևան քաղաքում գտնվող բիլիարդի խաղասրահում տեղադրված է 5 խաղասեղան, ապա կազմակերպիչը յուրաքանչյուր ամիս պետք է վճարի հաստատագրված վճար 200000 դրամի չափով (5 x 2.0 x 20000):

Բիլիարդ խաղի կազմակերպման գործունեության կազմակերպիչները ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն ներկայացնում են հարկային տեսչություն՝ մինչև գործունեություն սկսելը և հետագայում՝ յուրաքանչյուր տարվա հունիս և դեկտեմբեր ամիսների ընթացքում:

**ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՁԵՐ ԲԻՋՆԵՍԸ
ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ԿՃԱՐՈՎ
ՀԱՐԿՄԱՆ ՌԵԺԻՄ**

Մինչտպագրական աշխատանքներ՝ «ԳԱՐ» ՍՊԸ
Տպագրություն՝ «ԷԳԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ
Տպաքանակ՝ 10 000